Հավելված N248
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26 -ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) Եվրամիության հետ տնտեսական համագործակցության վարչության (այսուհետ՝ Վարչություն) Եվրամիության ծրագրերի կառավարման բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիր՝ 23-32.10-Ղ4-2)

1.2 Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3 Ենթակա և հաշվետու աշխատողներ

Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4 Պաշտոնի փոխարինման պաշտոնները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը:

1.5 Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1) կազմակերպում է Թվինինգ, Թայեքս, Սիգմա, Սոսյու, Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի և այլ գործիքների ներքո Հայաստանի Հանրապետությունում իրականացվող աշխատանքների համակարգումը.

2) կազմակերպում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններին Թվինինգ, Թայեքս, Սիգմա, Սոսյու, Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի և այլ գործիքների ներքո ծրագրային փաստաթղթերի մշակման և համապատասխան տեղեկատվության տրամադրման գործում աջակցությունը,

3) կազմակերպում է Թվինինգ, Թայեքս, Սիգմա, Սոսյու, Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի և այլ գործիքների ծրագրային առաջարկությունների ուսումնասիրությունը, համատեղ մշակումը և գնահատումը,

4) կազմակերպում է Թվինինգ, Սիգմա, Սոսյու և այլ ծրագրերի, ինչպես նաև Թայեքս

միջոցառումների դիտանցման աշխատանքների և դրանց արդյունքների գնահատման աշխատանքները,

5) կազմակերպում է Թվինինգ, Թայեքս, Սիգմա, Սոսյու և այլ գործիքների ներքո Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների և ԵՄ համապատասխան փորձագետների հետ խորհրդակցությունների, աշխատաժողովների, ինչպես նաև ճանաչողական այցերի կազմակերպման աշխատանքների իրականացումը,

6) կազմակերպում է Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի համակարգումը, համապատասխան ծրագրային փաստաթղթերի մշակումը և դրանց ներքո իրականացվող ծրագրերի դիտանցումը,

7) կազմակերպում է Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի գործընկեր պետությունների հետ հանդիպումների, նիստերի, շահառուների հետ խորհրդատվությունների ու վերապատրաստումների կազմակերպումը, համակարգող մարմինների հանդիպումներին մասնակցությունը,

8) կազմակերպում է Եվրամիության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող աջակցության շրջանակներում համապատասխան ֆինանսավորման համաձայնագրերի շուրջ բանակցությունների իրականացման կազմակերպումը, համաձայնագրերի շրջանակներում ստանձնած պարտավորությունների իրականացման ընթացքի դիտանցման ապահովումը,

9) կազմակերպում է Հայաստանի Հանրապետությունում ԵՄ պատվիրակության գրասենյակի հետ իրականացվող համագործակցությունից բխող աշխատանքներին մասնակցությունը,

10) կազմակերպում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների և հնարավոր շահառուների շրջանում Եվրոպական հարևանություն գործիքի և դրա ներքո իրականացվող ծրագրերի հնարավորությունների ներկայացումը, պարզաբանումը և մասնագիտական խորհրդատվության տրամադրման աշխատանքները:

Իրավունքները՝

- Թվինինգ, Թայեքս, Սիգմա, Սոսյու, Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի և այլ գործիքների ներքո իրականացվող աշխատանքների իրականացման նպատակով համապատասխան մարմիններից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, ծրագրային առաջարկություններ, տեղեկատվական փաթեթներ,
- Թվինինգ, Սիգմա, Սոսյու և այլ ծրագրերի, ինչպես նաև Թայեքս միջոցառումների դիտանցման աշխատանքների և դրանց արդյունքների գնահատման աշխատանքներն իրականացնելու նպատակով պահանջել հաշվետվություններ, ոլորտային զեկույցներ և այլ փաստաթղթեր,
- Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի և դրա ներքո իրականացվող ծրագրերի դիտանցումն իրականացնելու նպատակով ստանալ համապատասխան ծրագրային փաստաթղթեր, առաջարկություններ, հաշվետվություններ,

• Եվրամիության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող աջակցության շրջանակներում համապատասխան ֆինանսավորման համաձայնագրերի շուրջ բանակցությունների իրականացման նպատակով համապատասխան մարմիններից պահանջել հաշվետվություններ, եզրակացություններ, առաջարկություններ,

• Հայաստանի Հանրապետությունում ԵՄ պատվիրակության գրասենյակի հետ իրականացվող համագործակցությունից բխող աշխատանքների շրջանակներում ստանալ հաշվետվություններ, զեկույցներ, գրություններ, տեղեկատվական փաթեթներ,

• Հայաստանի Հանրապետության պետական մարմինների և հնարավոր շահառուների շրջանում Եվրոպական հարևանություն գործիքի և դրա ներքո իրականացվող ծրագրերի հնարավորությունների ներկայացումն իրականացնելու նպատակով համապատասխան մարմիններից պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն, գրություններ, վերլուծություններ, առաջարկություններ:

Պարտականությունները՝

• Թվինինգ, Թայեքս, Սիգմա, Սոսյու, Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի և այլ գործիքների ներքո իրականացվող աշխատանքների իրականացման նպատակով պատրաստել գրություններ, զեկույցներ, ուսումնասիրել ծրագրային առաջարկություններ,

• Թվինինգ, Սիգմա, Սոսյու և այլ ծրագրերի, ինչպես նաև Թայեքս միջոցառումների դիտանցման աշխատանքների և դրանց արդյունքների գնահատման աշխատանքներն իրականացնելու նպատակով մշակել հաշվետվություններ, ոլորտային զեկույցներ և եզրակացություններ,

• Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի և դրա ներքո իրականացվող ծրագրերի դիտանցումն իրականացնելու նպատակով ուսումնասիրել համապատասխան ծրագրային փաստաթղթեր, առաջարկություններ, հաշվետվություններ,

• Եվրամիության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող աջակցության շրջանակներում համապատասխան ֆինանսավորման համաձայնագրերի շուրջ բանակցությունների իրականացման նպատակով պատրաստել հաշվետվություններ, եզրակացություններ, առաջարկություններ,

• Հայաստանի Հանրապետությունում ԵՄ պատվիրակության գրասենյակի հետ իրականացվող համագործակցությունից բխող աշխատանքների շրջանակներում մշակել հաշվետվություններ, զեկույցներ, գրություններ, տեղեկատվական փաթեթներ,

• Հայաստանի Հանրապետության պետական մարմինների և հնարավոր շահառուների շրջանում Եվրոպական հարևանություն գործիքի և դրա ներքո իրականացվող ծրագրերի հնարավորությունների ներկայացումն իրականացնելու նպատակով մշակել տեղեկատվական փաթեթներ, գրություններ, ուսումնասիրել վերլուծություններ, առաջարկություններ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ միջազգային կապերի (միջազգային հարաբերությունների) բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիտորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետցիաներ

1. Ծրագրերի մշակում և կառավարում
2. Ժամանակի կառավարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
5. Ծրագրերի նախագծում, կառավարում և մոնիտորինգ
6. Ռեսուրսների բաշխում և կառավարում
7. Քաղաքականության մշակում և իրականացում:

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի և այլ պետական մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև պատվիրակված լիազորությունների շրջանակներում մասնակցում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը: